

Արեւելեան Հայոց եկեղեցական հանդերձն որթողորքս եկեղեցւոյն հետ նոյն է, միայն թէ եպիսկոպոսունք չեն առնուր որթողորքս եպիսկոպոսաց շուրջառն (Sacros), այլ քահանայից գործածած շուրջառն:

Քահանայն՝ որ Տէրութիւն կը կոչուի, պատարագի ժամանակ կը գործածէ «Վահաս» կոչուած ուսանոցն, որուն արտաքին կողմը 12 Առաքելոց պատկերը կայ, իբրեւ խորհրդական պատկեր խորայելի 12 ցեղերու: Խորանի վրայ քահանայն հողաթափ կը հագնի, բայց «Սուրբ Աստուած» էն յառաջ միայն մուծակով կը մնայ, եւ նաեւ զարդքն ու սաղաւարտը վար կ'առնու²⁴:

Արեւելեան հայ կղերն ունի երկայն գէս, մօրուք եւ արեւելեան հանդերձ, որթողորքսն երու պէս:

Քահանայն դասու մէջ միայն այն ատեն կրնայ միասին երգել՝ երբ փիլոն ունի վրան: Կապոյտ փիլոնը, որ հրամանաւ Կաթողիկոսին՝ Արքեպիսկոպոսէն կը տրուի, առաջին աստիճան պատուաւորութեան կը նկատուի. երկրորդ բարձրագոյն աստիճանն է ոսկի շղթայով կրծոց-խաչ, երրորդ եւ ամենաբարձր աստիճանն՝ որ քահանայի մը կարելի է տալ, է մանուշակ թաւշեայ եկեղեցական խոյր մը «թասակ» կոչուած, ումաներէն potcap կամ scufie.

Հայկական եկեղեցիք ճարտարապետութեան կողմանէ ճիշդ որթողորքս եկեղեցեաց պէս շինուած են, եւ երգեհոն չունին. խորանն արեւելք ուղղուած է: Պատկերի որմը $\frac{3}{4}$ մեղր